

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:
Օտարադարձարարքի դիմում են ուղղակի
Դպրատան Պեդագոգի Մուսախան:

ՄԱՍԿ

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Ցայտարարութիւնները համար վճարում են
խրատանցիւր ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ Տեղական լեզուի դաստիարակութիւնը: Ներքին լեզուի: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ Պարտականութիւն: Թիֆլիս: Նամակ: Փրատական: Արտաքին լեզուի: ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ: — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կ. Պօլսի հայ մամուլը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԿՐԱԿՈՎԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ

«Кавказ» լրագրում կարգում ենք հետեւեալ յօդուածը:
Տեղական լեզուների յարաբերութեան հարցը դէպի ուսաց լեզուն, և ընդհանրապէս, Անդրկովկասեան ուսումնարաններում, շատ անգամ տաք վիճարանութեան առարկայ էր դառնում տեղական մամուլի մէջ, որը շատ անգամ սխալ եզրակացութիւններին էր հասցնում տեղական ազգայնական լինելու վերջին ժամանակը այդպիսի դրութեան մէջ էր գտնվում ուսաց լեզուի հաստատութեան հարցը տեղական տարրական ուսումնարանում: Pro և contra կարծիքներ էին յայտնվում մինչև որ այս հարցը օրէնսդրական վիճիւ չէր ստացուի, որ հրատարակեցաւ այս տարի Կովկասեան ուսումնական շրջանի վարչութեան շրջաբերականների № 2-ի մէջ: Մենք խօսում ենք այս բանի մասին, նպատակ չունենալով անցնել յիշողութիւնները զարթեցնել: Ընդհանրապէս, մենք կամենում ենք ասել, որ մասնացոյց արած վճռով հարցը կիսով չափ միայն վճռված է: Ուսաց լեզուն, որը օրէնքով և ազգայնականութեան ցանկութեամբ բռնեց իր տեղը քաղաքային և գիւղական ուսումնարանում, հետաքրքիր

վարկերից մէկ կողմն է: Անում է կատարելապէս բաւականութիւն չէր ստացած միւս կողմը—տեղական լեզուները: Նրանք այսօր խոշոր ներկայացուցիչներ ունեն, գոնէ հետեւեալ երեք ազգերը՝ հայերը, վրացիները և թաթարները: Այդ լեզուներով խօսում են ժողովրդի նշանաւոր մասանները, որոնք խառն են բնակվում: ալ լեզուներով դուրս թիւն ունի, թէպէտ և ոչ հարուստ, գրականութիւն և մամուլ: Եթէ տեղացիները կարելի ունեն ուսաց լեզուն սովորականացնելու և գիտնալու, որպէս պետական լեզու, կրթութեան լեզու, արդարադատութեան և ներքին յարաբերութիւնների լեզու, որ առաջ է գալիս դիտական, առեւտրական և արդիւնահանական ինտերեսներից, այն ժամանակ, կարծում ենք, որ ուսման և ոչ պակաս պէտք է հետաքրքրված լինեն գլխաւոր տեղական լեզուների ուսումնասիրութեամբ, որոնց միջոցով միայն նրանք կարող են մօտիկ յարաբերութիւններ կապել ազգայնականութեան մասանների հետ: Եթէ տեղացիները, ուսումնասիրելով մեր լեզուն, չեն կարող կորցնել իրանց ազգայնականութիւնը, ինչպէս որ նրանք չեն կորցրել նրան, ուսումնասիրելով եւրօպական ուրիշ լեզուներ, այլ, ընդհանրապէս, այդ բանից շատ օգուտներ են քաղում իրանց կուլտուրայի համար, այնպէս և ուսմանը հակառակ օգուտներ կունենան, թէ գիտնական և թէ գործնական, հիմնաւորապէս ծանօթացած լինելով տեղական լեզուների հետ, որոնք իրանց գիտնական ներկայացուցիչներն ունեն մինչև անգամ կայսրութեան բարձրագոյն դպրոցներում: Այնու ամենայնիւ, ոչ ոք չէ կարող հակառակի այն մտքին, որ մի և նոյն ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնների ժամանակ, ինչպէս և ամեն գէպքում, աշխարհումս պարզութիւնը աւել

լի լաւ է, քան թէ աչքակապ խաղալը: Այս պատճառով, ինչպէս որ մենք առաջ յայտնում էինք, այժմ ևս նոյնպէս կրկնում ենք մեր համոզմունքը, որ տեղական լեզուների ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը մեր անդրկովկասեան ուսումնարաններում, պէտք է վերջապէս ճանաչվի և ընդունվի: Այդ մտքի իրագործման համար մասամբ մէկ քայլ արած է նրանով, որ մեր բոլոր ուսումնարաններում ցանկացողներին թոյլատրվում է սովորել տեղական լեզուներ, որոնց համար առանձին միջոցներ են տրվում պետական գանձարանից, և նոյնպէս նրանով, որ այդ լեզուների ուսումնասիրելը պարտաւորեցուցիչ է դարձրած գիմնազիայի թագաւորական թոշակաւորների համար: Բայց տեղական լեզուների ուսումնասիրութեան համար նշանակված միջոցները այնքան բաւական չեն, որ կարողանային վճարողական նշանակութիւն ունենալ: Մինչև 1867 թիւը մեր տեղական ուսումնարաններում ուրիշ կերպ էին վերաբերվում դէպի այս հարցը: Այն ժամանակ տեղական լեզուների սովորելը երկրի մի քանի գիմնազիաներում պարտաւորեցուցիչ էր բոլոր աշակերտների համար:

Այդպէս, տեղական կուլտիական և բնական գիմնազիաներում դասախօսում էին վրացերէն, թաթարերէն և հայերէն լեզուները: Բայց մեր գիմնազիաների կուլտիական համարեա անդադար վերանորոգութիւնը, և գլխաւոր լաւ ուսուցիչների պակասութեան պատճառով տեղական լեզուների կատարեալ իշխանութիւնը վճռեց՝ տեղական լեզուների սովորելը կամաւոր դարձնել: Մենք կարծում ենք, որ այժմ ժամանակները սատարի փոխվել են: Տեղական լեզուները մամուլի չնորոգված ստացան, ինչպէս մենք վերստին

ցինք, մեծ զարգացում և նշանակութիւն, և ուսաց ազգայնականութիւնը առաջխաղացելի հասկանում է նրանց հետ ծանօթանալու անհրաժեշտութիւնը: Եւ այժմ աւելի հեշտ է այդ լեզուների համար լաւ ուսուցիչներ գտնել: Վերջապէս ժողովրդական կրթութիւնը, ուսուցչական սեփնաւորանքի և վարժապետական ինտիմութիւնի հիմնվելով, լայն զարգացում ստանալով երկրիս մէջ, պահանջում է իրան համար նոյնպէս ուսաց գործիչներ, որոնք հիմնաւորապէս ծանօթ լինեն գոնէ տեղական լեզուներից գլխաւորների հետ: Վերջապէս, վարչութեան աւելի և աւելի բարդացող խնդիրները, որոնք պահանջում են անդադար և անմիջական յարաբերութիւններ ունենալ ժողովրդական խմբերի հետ,—այս բոլորը մեզ այն համոզմունքի է հասցնում, որ մեր ուսումնարաններում տեղական լեզուներին պէտք է պատշաճաւոր տեղ տրվի, ուրիշ ընդհանուր-պարտաւորեցուցիչ առարկաների հետ: Երկու տարի առաջ մենք համարեա մի և նոյն միտքը յայտնեցինք (տես Кавказ 1879 թ. № 109): Մենք այն ժամանակ ասում էինք, որ անհրաժեշտ է եթէ ոչ բոլոր, գոնէ երկրիս մի քանի միջնակարգ դպրոցներում պարտաւորեցուցիչ դարձնել բոլոր աշակերտների համար տեղական լեզուներից մէկի կամ միւսի ուսումնասիրութիւնը, նայելով տեղի վրա, թէ որտեղում այս կամ այն լեզուն տիրապետում է: Տեղական լեզուի ուսումնասիրութիւնը միջնակարգ դպրոցներում, ասում էինք մենք այն ժամանակ, սկզբում պէտք է բուն գործնական բնաւորութիւն ունենայ, իսկ վերջը տեսական: Այս կամ այն լեզուն թէ խօսակցական և թէ գրաւոր պէտք է այնքան ուսումնասիրվի, որ վերջը նրա հետ ծանօթացած լինելով, կարելի լինի անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել կովկաս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Երեսուն և աւելի տարիներ կան որ հայն մի պարբերական մամուլ ունի: Հայ լրագրիւններն մերթ դիւրաւ, մերթ անձկութեամբ, նոցանէ ուսմանը տեղական և ուսմանը վաղապէս կերպով յարաբերութեան մասը են ժողովրդեան չափահաս մասին հետ, արձանագրած են ժամանակակից դէպքերուն պատմութիւնը, և գրական միջոց, դիտական մի անկիւն չեն թողուցած որոց նոքա առաւել կամ պակաս յաջողութեամբ մերձեցած չը լինին: Ի՞նչ է եղած մինչև հիմա սոցա արտաբերած արդիւնքն ազգային զարգացման մասին: Ի՞նչ ազգայնութիւն սոքա կարողացել են բանեցնել ժողովրդեան վրայ, որ աստիճան նպատակած են նոցա ներթափան և բարոյական կացութեան բարձրելուն, և ունին միթէ մի տիպոս հասարակութեան երախտագիտութեան արժանի: Այս խնդիրներն են ահա, որք համառօտութեանը կը կամւոր:

Մեր քննադատութիւնն առ այժմ Կ. Պօլսի հայ լրագրութեան վերայ է միայն, թողելով ուրիշ անգամ մեր ընդհանուր տեսութիւնն հայ մամուլի վերայ առ հասարակ:

Եղելութեանց մէջ չը մտած, կը յայտարարեմք

կանխաւ որ Կ. Պօլսի հայ մամուլն վիճակի ի մօտուստ և առանց կանխակալ կարծեաց քննողն մի տիպով տպաւորութիւն կը զգայ: Լրագրութիւնն չէ այստեղ ինչ որ պէտք էր լինի, ինչ որ կը կարծէ ժողովրդին ընդհանրապէս: Եթէ լրագրութիւնն հասարակաց կարծեաց արձագանքն է, եթէ ուշիմ և խոհեմ ուղղեցողն է մի ազգի, կարեւոր առանց վարանման ասել թէ առաջինն չէ բնաւ և երկրորդն չէ կարողացած լինիլ երբեք: Երեսուն տարի ազգին մէջ կենք վարելէ հետ, տակաւին այս ժամուս նորա ունեցած վարկն և ոգորմունք վիճակն անժխտելի մի փաստ է մեր կարծեաց ճշտութեան:

Առէք մի լրագիր Կ. Պօլսի ապուած, քաղական կամ ոչ, հին կամ նոր, և տեսէք թէ կարծիք եք իմանալ թէ ինչ սկզբունքի կը ծառայէ նա, ինչ է իւր ընթացքը և ինչ կերպով իւր առաջին ունեցած պարտաւորութիւնն կատարել կը կարծէ: Կ. Պօլսի հայ լրագրիւններն եւրօպական հինգերորդ աստիճանի թերթերուն տիպոս պատկերներն են թերեւ, բայց չեն և ոչ մին ազգային լրագիր, բառին բացարձակ առմամբ: Ատիւ և անուր քաղաք և առաւել կամ պակաս ճշտութեամբ թարգմանված լուրերու մի հաւաքում, անհամ, երկար և աննշան թղթակցութիւններ, հակոտնադիմադրեալ եկած մի քանի իրողութիւններ և իւր ազգային մաս, վարդապետաց տեղափոխութիւն, ժողովներուն բացման և փակման գիւղացուն, խակ գրէք մը վրժած առ ազգն ուղեկալ մի քանի ծամօւած փոսած

պատգամներ, ահա սոքա են այդ թերթերուն ամբողջ հաշակչիւնը: Եթէ երբեք մի լուր էջ սպորի նոցա մէջ, այդ մի անսովոր պատահմունք է միայն: Ողջ սկզբունքներով, ուղիղ ոգով, անաչառ գաղափարներով և ճշմարիտ ազգայնական խանդով խմբագրված մի օրագիր տակաւին հետազոտելու ետեւ եմք: Ոչ մէկ խմբագիր կը վայելէ այստեղ իւր խղճի կատարեալ ազատութիւնը, և երբեք չենք նշմարած որ մի լրագրագետ գրած լինի ինչ որ հաճելի չը կարծէր իւր բաժանորդներուն, որոց թիւն սահմանափակ լինելուն նոցա անորոշած լեզուն լաւ ծանօթ է նորա: Հայ և ապա ազգային շահերն, ի՞նչ է Կ. Պօլսի հայ մամուլն այս պարսպակի կացութեան պատճառներն:

Այստեղ մի անձ մի լրագիր կը հիմնէ ինչպէս պիտի հիմնէր, եթէ աւելի շահաւոր գտնէր, մի նպարտվածաւոր խանութ կամ մի երկրաթիւ ձուլարան: Որագրագետք, ևս առաւել նոցա օգնականք, ըստ մեծի մասին տարրական գիտութիւններէն իսկ զուրկ են, ոչ մի համալսարանի մէջ ուսումնն ին առած, ոչ մի մասնագիտութիւն ուսած են, և մինչև երկու լրագիր գրող ցոյց կըրնամք տալ որ մի օտար լեզուէ ճշտութեամբ մի հատուած կարող է թարգմանել: Լրագրաց հրատարակիչներն ներկայիս տեղական անձուկ վիճակի մէջ են: Իւրը դրամագրութիւն նոքա սկսած օրերին մի թերթ թուղթ և մի մատիտ ունեն: Այսպիսով սկիզբէն մինչև վերջն մի նպատակի միայն կը ծառայեն, մի բանի միայն զգուշու

թիւն կընեն, այն է պահել իրենց դժուարաւ ձեռք բերած բաժանորդն: Եթէ կան այնպիսիներ, և կը փութամբ ծանաչել նոցա այս յատկութիւնն, որք երբեք մի վատութիւն յանձն չեն առնուր որ և է փութարկութեամբ, նոցա հակառակ կան նաև դժբաղդաբար այնպիսի լրագիրներ, որք զաւեշտական լինելու պատրասեալ գաղթակցութիւնն իւր վերջին սահման հասուցած են: Ամեն ազգայնաւոր մարդ, եկեղեցական թէ աշխարհական, կարող է չափել աստ մի թերթ ջատագով իւր գործող: Եթէ ոք կամենայ այսօր Կ. Պօլսի մէջ քսան րուբլ կամ աւելի պակաս գոնել, կարող է գտնել մի հայ թերթ որ յանձն առնու քաղաքին ամենէն պատուաւոր և ամենէն առաքինի ընտանիքն գրեթէ յակնան յանուանէ ցիւրխ մէջ թաթախել:

Բայց փակեմք այս նողկալի դուռնը:

Բոլոր այս աչքալի իրողութիւններն բաւական չէին կարծէք Կ. Պօլսի հայ մամուլն իրեն վախելու աստիճանէն վար բռնելու համար: Շատ ատեն չը կայ մի խումբ թուղթ միտողներ նաև երեսն են եղած, իմաստակներուն կատարեալ փառք, որք լրագրաց էջերն յատեն յափշտակելով իրենց կոկողաբանութիւններն և անհեթեթ գաղափարներն առարածելու յարմար կրկէս բրած են: Աստուածարանութիւն, լեզուարանութիւն, ընկերաբանութիւն, գրական փիլիսոփայութիւն, մէկ բառով այն ամեն լուրք և փափուկ խնդիրներն, որոց եւրօպական ընտրելագոյն տաղանդներն անգամ դժուարաւ կը մտնեն, այդ ան-

Անդիայի Ստերին Մակեդոնիայի մէջ
պատանդ վերցնող առագակները շրջապատ-
ված են ծովից նաւերով և ցամաքից թիւր-
քաց զօրքերով: Նորերումս թիւրքաց պա-

Եւ չառ ներդրութիւն հմ խնդրում մերելի «Մշակի» յարգոյ ընթերցողներէյ, որ յանկարծ դադարեցրել տեղեկութիւն առաջ աշտտեղի անցքերի մասին: Չիմ ուզում աշտտեղ առաջ բերել բոլոր այն հանգամանքները, որոնք արգելեցին ինձ՝ թղթակցութիւն չարունակել առանց ընդ-միջեւ, այլ կը խօսեմ այն բարելոյ վրա, որոնք ունեն իսկապէս լրագրական նշանակութիւն: Կարծես թէ տասն և իններորդ դարու վերջերը նշանակված են միայն նրա համար, որ բոլոր մեծ տէրութիւնները, բայցի մեծ պատերազմ-ներէյ, ունենան և փաբրիկ կռիւներ կիսավայ-րենի խմբակների հետ: Ռուսաստանը լրբ տա-ճիկներէյ դունը լաւ շարակուց յետոյ, պէտք ունեցաւ թէկէկները խրատել: Զուգակներին ձեռնց Անգլիոյ, բայց բռնները փոխաբերել վը-տակցին ջոնսոններին: Միայն Ֆրանսիան էր մնում պարտական պատմութեան առաջ ինչ-քան որ աշխատեց Զուսաստանի դորներում խառնել՝ չը յաջողվեց սրան: Բայց վերջապէս սա էլ մի բան պէտք է անել բայց ներքին բարեկարգութիւնից և յաջողվեց այդ: Թոռնիդը սահմանները անցնում են կիսավայրերի իբրեւ-միայնակը ալ իրապիական սահմանը, կատարում են եւրոպական գաղթականներին և յափշտակելու արանց կայքը վերագրառում են իրենց տեղը: Ֆրանսիական կառավարութիւնը պահանջեց Թո-ռնիսի բէլց, որ պատժէ այն չարագործներին, բայց բէլն պատասխանեց կեղծաւորութեամբ այն բանը ինչ որ սուլթան շամիդն է պատաս-խատում քիւրդերը վերաբերութեամբ՝անկա-րող են զպիւլ այդ անհնազանդ ժողովրդին: Ուրեմն Ֆրանսիան իր դործը իր ձեռքով պէտք է կատարել. առանց ժամանակ կորցնելու զոր-քեր ուղարկեց չոգինաւերով դէպի Թունիդի սահմանները: Այս անցքը մեծ աղբուկ հանեց և հզոր տէրութիւնները յայտնեցին այն կարծի-քը թէ Ֆրանսիան կը բաւականանայ միայն խրումիրները պատժելով. դիակացած Տաճ-կաստանն էլ յիստաբացաւ և թուրքակի պէս մն և նոյնը կրկնեց առանց հատկանշու-թեան:

— Ինչպէս յայտնի է Գլադսթոն առաջարկեց արձան կանգնեցնել Ռիկոնսֆիլդին, բայց պարլամենտում կազմակցեալ մի սատարի ընդդիմադրութիւն այդ առաջարկութեան զեմ: Ընդդիմադրութեան առաջնորդը Լաբուէր պատգամաւորն էր: Գրա ճամբար Լաբուէր ստացաւ բազմաթիւ ջնոքհակաութիւններ այդատամբում եւս: Երբեք չէր հաջողուիր իր անհատական արձանը կանգնեցնել իր քաղաքին: Երբեք չէր հաջողուիր իր անհատական արձանը կանգնեցնել իր քաղաքին:

Ս. ՊԵՏՏԵՐԻՈՒՐԿ, 4 մայիսի: Պետական բանկի 5⁰% տոմսերը առաջին շրջանի արժեքը 97 ռ. 25 կ., երկրորդը 94 ռ. 25 կ., երրորդը 94 ռ. 50¹/₂ կ., չորրորդը 94 ռ. 50 կ., ներքին 5⁰% առաջին փոխառութեան տոմսերը արժեքը 223 ռ. 75 կ., երկրորդը 216 ռ. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը արժեքը 92 ռ. 87¹/₂ կ., երկրորդը 93 ռ., ուկի 8 ռ. 21¹/₂ կ.: Իռլանդ 1 ռուբլ 1 լժնդոնի վրա արժեքը 24,37 պենս, Ամստերդամի վրա 208 պենս, ռուսաց 100 ռ. փափրիկի վրա արժեքը 257 Ֆրանկ: Բորսայի արամատարութիւնը թշու է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԵՆՐԻԿԶԵՆԻԱՎԱՊԱՐԻՐԵՐ, ԿԱՌԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՄԱՆԿՆԱԾՈՒ
Կ. ՊՅՈՍԵՅԱՆ ԼՐԱԳՐԱԳԵՆՈՐԵՐ, ԻՆԴԵՐ ԲԱԺԺԱՆԻՐՈՎ
ՆԵՐՈՎ ԳՆԱՅՐԱԳԵՆՈՐԵՐ: ԱՄԵՐԻԿԱՆ ՈՐ ԼՐԱԳՐԱԳԵՆՈՐԵՐ
ՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՄԱՆԿՆԱԾ ՄԻՋՆԱԿ ԵՎ ԵՐԱՐԵՐԻ ՄԱՅԼՈՐԳ
ԱՅՈՎ Է ՅԱՆՈՎ ԵՎ ՎԱՅԱՐԵՐԻ ԶԱՄԱՆԱԳԱՐՅՈՒՆ ԿԻՆԱՅՑ ԱՄ
ՍԻՆԱ ԳՐԱՐԱԳԱԳԻ ԻՄՋԷ ՓԱՊԱԶԵՆԱԿՈՒՆ ՆՈՒՐԱԴԵՐ ԼՆԻ
ՆԱԶՆԵԼԻ Է ԺԱՐՈՂԿԱՅԻՆ ԲՆԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՄԻ ԼՐԱՄ
ԳԻՐԻ ԱՅՍ ԿԻՄ ԱՆՆԻՆԱՆ ԱՆՃԻՆ ՆԻՆԱՐԱՐԿԻՆԻՎ ՈՒՅԻՐԵՆ
ՅԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԻ ՆՉՈՐԱՆ ԱՆՆԻՆ Է ՍԿՈՐԱՆ, ԲԱՅՑ
ԱՅՈՎ ԵՎ ՅԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԱՐԱԶԵՆԱԿԱՆ Է ՄԻՋՆԱԿ, ՎԱՄԱՆ
ԳԻ ՆԱՍ ԵՎ ԻՆԴԵՐԷ ՄԱՅԱՐԱԳԵՆՈՒԹՅՈՒՆ ԳՐ ԳՐԱԶՆԱԾԵԼ
ԵՎ ՈՐ ԱՆԿԻՆ Է, ՆԱՐԻԿ ԵՂՈՃ ՎԱՐԿԻՆ ՈՒ ՆԱՄԱՆ

Լրագրագիրտ չը լինեն ամօթ չէ երբէք: Զօ-
չաքաղութեամբ և զքօղեալ մութացկանութեամբ
ապրին է պարսաւելին:

և որ աւելիքն է, հարկ եղած վարկն ու համա-

4. *Молгу.* 4. *У.*

մեր
երն,
աջա-
ղէտը
կներ
աշիւ
եցնէ
հուն
Յրդ՝
նկե-
րնե-
ցնն
Յիշել
ըն-
նրա-
ռեմը
ններ
սլա-
փա-

ններն
ծա-
ներն,
որը
քայ-
, որ
արող
սլար-
յաս-
նէն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտիրոս Հանազարեանցը և Ան-
նա Մալիկեանցը զաւօք սրտի յայտնելով
առաջինի աներ և երկրորդի ամուսին
Աւետիս Մալիկեանցի մահվան լուրը,
խնդրում են բարեկամներին և ծանօթ-
ներին շնորհ բերել յուզարկաւորու-
թեան հանգիստն ներկայ գտանվելու որ
կը լինի հինգշաբթի, մայիսի 7-ին ժո-
մի 9½-ին:

Հանգուցեալին կը տանեն Մողնու
եկեղեցին իւր կացարանից Սօբորակում
տուն կոչեալ Սմբատովի, կից վարչա-
սկանս պեկարնային:

(2)

Կ. և Զ. ՊՈՊՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՑ
ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ: Ամենակարճ ժա-
մանակամիջոցում մենք կը բանանք Թիֆ-
լիսի մէջ մեր առեւտրական տան թէյի վա-
ճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս
խանութը կը լինի Գօթլիմակայս փողոցի
վրա Միրիմանովի տանը: Խանութը կը ստա-
նայ ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ, որ կը զգած
կը լինի Մօսկովայի մեր գլխաւոր խանութի
մէջ մեր անձնական ՀԱԿՈՂՈՒԹԵ-
ԱՄԲ:

2—5 (2)

144 Արծրունու դալերէս 144
ամենալժան պահեստ
մերէի և հայելիների:

Въ Редакціи газеты

«МПАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.



ՎԱՐՇԱՎԱ: Իր յատկութիւններով մարմնի մասերի և
մանուսանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փառումն
ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով ծախվում է Եւրօպայի բոլոր մեծ քաղաքների գեղատնային և զբօսայիտների
մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԵՆՍ-
ԿՈՒ գեղատան մէջն է գտնվում: Վարչապետը, Էլէկտորալի փողոց № 35.
Գալմանին մեծ արկիկը արժէ վարչապետ 50 կօպ., աւելի փոքրը 30 կ.
պէտք է զգուշանալ խարդախութեանից և պահանջել, որ իւրաքանչիւր արկիկը
ունենայ գործածութեան մեկնութիւնը և ֆարիկի աշխարհահայտնային մեղայնները:

Վ. ԿԱՐՊԵՆՍԻ

3—20 (1)



Ձը նայելով մարտի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնելով կը ծախվին:
ԿՈՆԳՈ-ԹԷՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կօպ., շատ լաւ ՄՈՆԻՆԳ 1 ր. 20 կ. և
1 ր. 40 կ., հիւսնայի ԿԱՅՍԱՌԻ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ
ԹԷՅ 2 ր. առանց թղթի: Անգլիական ըէփօլիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20
ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵ-
ՐԸ, Զօնանի ԿՈՂՊԵՐՆԵՐԸ, Տօրնօրի ԳՐԻՉՆԵՐԸ և Էկտրակա կակա-
շօկօպի ծախվում համար, որոնք ֆարիկի հանգիստ ժամանակ ունի մեղալ ստացան:
ՀՈՏԱԻՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65
կ. և ամենալաւ 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հագուստ 15 ր., կօշիկներ
հագի դէմ 60 կ. ֆունտը:

68—100

Վերականգնող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ լերադար-
ձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱ-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ.:
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ
ԻԻՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամենը վրձին զկա-
ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:

64—100

Տպագրութեան համար պատրաստվում է մեր
ժողովածուի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ: Այս հրա-
տարակութիւնը բաղկացած կը լինի շատ
հատորներից, որոնք հեղհեղաէ 'ի լոյս
կընծայվին. նոքա պէտք է բովանդակ են
իրանց մէջ հայ ժողովրդեան բերանացի
աւանդութիւնները.— ՀԷՔԻԱՅԵՐ. ԺՈՂՈ-
ՎԴԱԿԱՆ ԵՐԵՐ. ԲԱՌԵՐ ԵՒ ՈՃԵՐ. Ա-
ՌԱՅԵՐ. ԱՌԱԿԵՐ. ԱՆԵՐՔԵՐ. ՕՐՀ-
ՆԱՆԲԵՐ. ԵՐԳՈՒՄԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿԵՐ.
ՇՈՒՏ-ԱՍԵԼՈՒԿԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
և ՊԱՐ-ԵՐԳԵՐ:

Որոյ համար լի յուսով դիմում ենք մեր
ազգայնաց, ընդհանուր ուժով օգնելու մեզ,
ուղարկելով պատշաճաւոր նիւթեր, բուն
տեղական բարբառով: Աղբիւրներին պատիւ
կունենանք յիշել, որպէս հրատարակութեան
աշխատակիցներ, ուղարկելով նոցա մի մի
օրինակ բոլոր հատորներից:

Մեր հասցեն

Тифлисъ. Въ частную лечебницу,
доктору Баграту Навасартянцъ.

ՄԻՆԶԵՐ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊ-
ՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ
ԳՐԲԵՐԸ:

- 1) Երկու մանրակէպ. Աւֆօնս Դօդէից
Թարգմ.Ն.ՏԵՐ-Աւետիքեանի, գինն է 15 կ.
 - 2) Պօղնանու ուսուցչի օրագրից, Թարգմ.
Տ. Նազարեան. 20 կ.
 - 3) Պատու ժամեր, ինքնուրոյն բանաս-
տեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
 - 4) Հանապարհօրդութիւն Ղարաբաղում,
Ա. ցախեցի 30 կ.
 - 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, Թարգմ.
Տ. Նազարեանցի 15 կ.
 - 6) Վճար խոնակ, բանաստեղծութիւն-
ներ Ն. Տ. Աւետիքեան. 50 կ.
- Այս վեց գրքի գինն է միասին 1-50
կօպէի: Առանձին մէկի համար բաժանոր-
դագրութիւն չէ ընդունվում, բացի «Վճար
խոնակից» որի համար առանձին կարելի է
ստորագրել և մնացեալ հինգը առանձին:
Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան:

ԱՆ ԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մօսկովայի բերվող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 կ.
—	1 ր. 10 կ.	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Ֆ. 3 ր.
79—100			

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-
ԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախվում
է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ
և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մա-
զայինը ստանում է թէյ ուղղակի պլան-
տատորներից, առնում է բոլոր ապրանքները
ուղղակի զործարաններից և բուսականա-
նում է փոքր շահով: Այդպիսի կայ սովո-
րաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-
սակի, կակաօ և շօկօղա-Փրայ, մուրաբա
և կօնֆէկաներ 25% աւելի է ծան, քան թէյ
ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէ-
վօլէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-
մաններ, դանակներ, գդալներ, թէյաման-
ներ, բաժակներ, թմբեր, գուլպաներ
կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-
մակիտառներ, կալէնկօր, թուղթ, մատիտ-
ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ծան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու
գալլէրէում:

100—94

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ծրծիւ մեքենա-
ներ 1 ր., ԲԱՃԱԿՆԵՐ 12 կ., ԶՐԱՄԱՆԵՐ
50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒ-
ՑԱՐԱՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՀԱԿԱԼ-
ՆԵՐ 5—50 ր., ժիլետներ 75 կ., փարիկ-

ներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԵՐ 4 ր.
տղամարդկանց 14 ր., ԳԼԽԱԿՆԵՐ 1
րուր, մակիտառներ 6 ր., հին պօրագէյն
և խերես 1 ր. 20 կ. շիշը, կօնիակ առա-
ջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԻՊՈՒ 50 կ.
թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅ 1 ր.,
40 կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ԱԼԲՈՒՄԵՐ շատ
է ծան:

8—15

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏԵՒ
«ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ»
անունով գիրքը, որ պարունակում է իր
մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղ-
ծութիւններ:
Օտարաբաղաբայից կանխիկ մէկ բուր
ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինա-
կին հետեւեալ հասցեով:
«Через Проксовейское Почтовое отделение
въ городъ Святого-Креста (Ставрополь. губ.).
Учителю Семену Сафарянцу.»

Ռուսիոյ Ամերիքայի տեւտրական մագա-
լիւնում, ծախվում է, Աւստրիայի բիպի
գերանդիք (կօսաներ) հարիւր հատն 55 բուր-
լով: Գփօցօղայա փողոց գալէրէյ Արծրու-
նի:

8—10